



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1012

Անթր.

1022

4
28



2013



ԱՆՔԵՐ
1022

6

PA
71654

ԷԴՄՈՆԴՈ ԴԷ ԱՄԻՉԻՍ

Ա Պ Ե Ն Ի Ն Ն Ե Ր Ի Ց

ՄԻՆՁԵՒ

Ա Ն Դ Ե Ր Ը

Հ
Կ

Ֆրանսերէնից Թարգմանեց

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ԹԻՖԼԻՍ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

ՊՐԻՆՏԵՐ ՓՈՂՈՑ, Ե. 1/2

1889

ॐ नमो भगवते वासुदेवाय

492747

2989

1000

1022-2913
7.8.1015
(1012
41)

114 [346]

Типог. И. Мартиросіанца, Орбел. ул., д. 1/2



ԱՊԷՆԻՆԵՐԻՑ

ՄԻՆԶԵԻ

ԱՆԴՐԵ


ԱՊԵՆԻՆԵՐԻՑ
ՄԻՆՁԵՒ
ԱՆԴԵՐԸ

պիսի նպատակով օտար աշխարհ են գնում՝ այն տեղի առատ վարձատրութեամբ հրապուրուած, և մի քանի տարիից յետոյ հազարաւոր ֆրանկներով իրենց հայրենիքը վերադառնում: Խեղճ մայրն ունէր երկու որդի—մինը տասն և ութ, միւսը տասն և մէկ տարեկան. աղու արտասուք թափեց նա զաւակներից բաժանուելիս, բայց և այնպէս արիաբար ու յուսալիւր ճանապարհ ընկաւ: Ճանապարհորդութիւնը չափով անցաւ: Բուէնօս Այրէս եկած չեկած՝ կինը մի գէնուացի մանրավաճառի միջնորդութեամբ, որ իւր մարդու ազգականն էր, և արգէն վաղուց այն տեղ գաղթած, գտաւ մի բարեշէն արգէնտացի ընտանիք, ուր և մտաւ լաւ ուռնկով: Մի քանի ժամանակ նա անընդհատ թղթակցում էր տնեցւոց հետ: Մարդը, զբուած պաշտանին համեմատ, իւր նամակներն առաքում էր ազգականին, որ և յանձնում էր կնոջը. սա էլ իւր պատասխանները նրա միջնորդութեամբ տուն ուղարկում: Երբեմն ազգականն իւր կողմից էլ աւելացնում էր մի քանի տող: Աիննամեն ամիս ութսուն խրանկ վաստակելով և իւր վրայ գրեթէ ոչինչ չծախսելով, իւրաքանչիւր երեք ամիս մի կտրոք գումար էր տուն հասցնում, որով և մարդը, որ մի անգին և բանուոր էր, կարող էր լինում հետզհետէ պարտքերը վճարել և իւր անունը վերականգնել: Մի և նոյն ժամանակ նա ինքն էլ աշխատում էր և արգէն գոհ էր իւր վիճակից: Այժմ նա փափագում էր, որ կինը շուտով վերադառնայ, որովհետեւ անոանց նրան տունը շատ դատարկ էր թւում, փոքր որդին էլ, որ մօրը սաստիկ սիրում էր, օր ըստ օրէն նրա կարօտը քաշելով, մաշվում ու տանջվում էր:

Սակայն կնոջ մեկնելուց մի տարի յետոյ մի նամակ ստացուեցաւ, որով նա յայտնում էր, թէ փոքր ինչ տկար է, և այնուհետեւ լուրերը հատան: Տնեցիք երկու անգամ գիր գրեցին ազգականին. ազգականը չպատասխանեց: Նամակ գրեցին արգէնտացի ընտանիքին, ուր որ կինը ծառայում էր. բայց արգէնօք նամակը տեղ չհասաւ և կամ հասցէն էր սխալ գրուած,—ոչ մի պատասխան չստացան: Մարդու միտքը կասկած ընկաւ, և այս անգամ նա գիր ուղղեց Բուէնօս Այրէսի իտալական հիւպատոսին, որպէս զի նա հարցուփորձէ: Հիւպատոսը լրագիրների միջնորդութեամբ կոչումն արաւ և երեք ամիս անցնելուց յետոյ պատասխանեց գէնուացի ընտանիքին, թէ ոչ ոք չէ յայտնվում գոնէ մի լուր հաղորդելու կնոջ մասին: Երեւի թէ բարի կինը, վախենալով առատ բերել մարդու անուան, լաւ էր համարել ծածուկ պահել իւր աղախին դառնալն ու թաքցնել իւր իսկական անունը... Դարձեալ անցաւ երեք ամիս: Հայրն ու որդիները մեծ տագնապի մէջ էին. դառն էր մանաւանդ փոքրի վիշտը, որ ոչինչ բանով չէր կարելի վարատել:

Ինչ անէին, հւժ գիծէին:

Հօր առաջին որոշումն էր ճանապարհ ընկնել և գնալ Ամերիկա՝ ամուսնուն օրոնելու համար: Բայց ինչպէս թողնէր իւր գործը, հվ կրսնդէր զաւակներին: Աւագ որդին էլ անկարող էր հեռանալ, որովհետեւ նոր էր սկսել բան վաստակել և անհրաժեշտ էր ընտանիքին: Ահա այս տագնապի մէջ էին նրանք, ամեն օր միեւնոյն վշտագին խօսքերը կրկնելով և մէկը միւսին լուռ դիտելով... Մի երեկոյ Մար-

կօն՝ փոքր որդին, վճռողաբար ասաց.—Պիտի գնամ Ամերիկա ու գտնեմ մօրս։—Հայրը տրտմութեամբ դիմելով թօթուեց ու պատասխան չտուաւ։ Այդ մի ազնիւ գաղափար էր, սակայն անիրազորներին... Տասն և երեք տարեկան հասակում մենակ Ամերիկա ուղեւորուել, ամբողջ ամիս ճանապարհին գտանուել... Բայց տղան ամենամեծ յամառութեամբ պնդում էր։ Մի օր, երկու օր, երեք օր կրկնեց նա իւր խնդիրը, չափահաս մարդու պէս փաստերը պարզ մեկնելով։

—Միթէ ուրիշներն Ամերիկա չեն գնացել, և դեռ ինձնից փոքրերը,—ասում էր նա։—Մի անգամ շոգեհաւ նստեմ թէ չէ՝ ես էլ ուրիշների նման այն տեղ կը հասնեմ։ Հասնելուն պէս՝ ինձ կըմնայ մեր ազգականի կրպակը գտնել։ Բուէնսուս Ալքէսում կան բազմաթիւ իտալացիք. անշուշտ մինը և կամ միւսը ցոյց կըտայ ինձ նրա փողոցը։ Ազգականիս գտնեմ թէ չէ՝ մօրս էլ կըգտնեմ, իսկ եթէ ազգականիս չըգտնեմ, հիւպատոսի մօտ կ'երթամ և արգէնտացի ընտանիքը կ'որոնեմ։ Եթէ մի փորձանք պատահած լինի, այն տեղ ամենքի համար անելու գործ կայ։ Հարկաւ մի աշխատանք կըճարեմ և գոնէ այնքան փող կըվաստակեմ, որ կարողանամ տուն վերադառնալ։

Եւ այսպէս հետզհետէ նա համարեա թէ յաջողեցաւ հօրը համոզել։ Հայրը լաւ կարծիք ունէր որդու մասին և գիտէր որ խելացի ու քաջասիրտ է, որ ամեն տեսակ չարքաշութեան ընդունակ է, և թէ այս լաւ յատկութիւնները նրա մէջ և՛ աւելի զօրացել էին տենչալի մօրը գտնելու սուրբ որոշմամբ։ Մի բարեկամ նաւապետ, լսելով գործի հանգամանքը, յանձն առաւ տալ Մարկօին երրորդ դասի մի տոմ-

սակ՝ ձրի նաւելու մինչև Արգէնտինիա։ Եւ հայրը, դարձեալ փոքր ինչ գիմադրութիւն անելուց յետոյ, վերջապէս զիջաւ ու վճռեց որ որդին ճանապարհ ընկնի։ Նա տուաւ որդուն շորերով լի մի պաշուսակ, փոքր ինչ արծաթ, մօր հասցէն, և ապրիլ ամսի մի գեղեցիկ իրիկուն շոգեհաւ մտցրեց նրան։ Արգէն մեկնելու պատրաստ նաւի վրայ հայրը լայով վերջին անգամ համբուրեց որդուն և ասաց,

—Ատրի՛ճ կաց, Մարկօ-ջան, դու գնում ես մի սրբազան գործի համար և թող Աստուծոյ քեզ օգնէ։

Խեղճ Մարկօ։ Նա ունէր մի զօրեղ սիրտ և մինչև անգամ այդ երկար ճանապարհի փորձանքներին գիմանալու ընդունակ սիրտ։ Սակայն երբ տեսաւ, որ իւր գեղեցիկ Գէնուան անհետանում է հորիզոնից,—որ ինքն արդէն լայնատարած ճովի վրայ է գտանվում, ազգակից գաղթականներով լի նաւի մէջ, մենակ, ամենքին էլ անձանօթ, միայն մի փոքրիկ պաշուսակով, որ իւր ամբողջ ստացուածքն էր,—այն ժամանակ մի յանկարծական լքումն տիրեց իւր սրբտին։ Ամբողջ երկու օր նա շան նման պառկած կեցաւ չարկի վրայ զրեթէ առանց բան ուտելու։ Նա սաստիկ կարիք էր զգում լաց լինելու։ Նրա գլուխը պաշարուած էր հազար տեսակ մտքերով, և ամենից տխրազինն և ամենից սոսկալին անվանելի յամառութեամբ կրկնվում էր,—այսինքն՝ թէ մայրն արդէն մեռած է... Իւր անհանգիստ ու ստէպ ընդհատուող քնի մէջ նա տեսնում էր միշտ մի անձանօթ կերպարանք, որ կարեկցաբար ասում էր նրան.—Մայրիկդ արդէն մեռած է։—Եւ նա իսկույն զարթում էր, խոր հառաչանք արձակելով, Բայց և այնպէս երբ նա

Գիբրալտարի նեղուցն անցաւ և Ատլանտեան ովկիանոսի ալիքները նշմարեց, նորից փոքր ինչ սիրտ առաւ ու քաջացաւ: Բայց ոչ ընդ երկար: Այդ անհաշիւ ու միշտ միահարթ ովկիանը, միշտ սաստկացող տաքութիւնը, Մարկօին շրջապատող թշուառ մարդկանց տրտմութիւնը, իւր միայնութեան անվանելի զգացմունքն այն աստիճան ճնշող էին, որ նա իսպառ յուսահատուելու վրայ էր: Նրան թւում էր, թէ արդէն մի տարիից ՚ի վեր ծովի վրայ է: Եւ ամեն առաւօտ քնից վարթելիս նոր ՚ի նորոջ սարսափում էր չիշելով թէ մենակ էր այդ անհուն ջրային անապատում, մենակ էր գնում Ամերիկա: Եւ նաւի վրայ ընկնող այն թռչուն ձկները, արեադարձի այն հրաշալի վերջալուսերն իրենց հրեղէն և արիւնագոյն ամպերով, զիշերուայ այն փոսփորային երևոյթներն, որոնք կարծել են տալիս, թէ ամբողջ ովկիանը մի հրահոսան ծովի նման այրվում է,—այդ բոլորն ոչ թէ իրական բաներ էին թւում իւր աչքին, այլ միայն անընդհան տեսիլներ: Գալիս էին օրեր, երբ եղանակը փճանում էր, երբ նա փակուած էր մընում իւր խցիկում. երբ ամեն բան դղրդվում ու պար էր գալիս և հառաչանքների ու նզովքների անհաշիւ ձայն էր հնչում նաւի մէջ. այն ժամանակ նա կարծում էր, թէ մահուան ժամը հասել է . . . Յետոյ ծովը հանդարտվում ու դեղնում էր և սկսվում էր անտանելի տաքութիւն,—գալիս էին տաժանելի ձանձրութեան անվերջ ժամեր, երբ քրտնահար ուղեւորները մեռելների պէս անշարժ էին մնում: Թւում էր թէ ճանապարհը ծալր ու վերջ գտնելու չէ—ջուր ու երկինք, երկինք ու ջուր, այս օրն երե-

կուայ պէս, վաղն էլ, ինչպէս այս օր,—այժմ,—միշտ,—չաւիտեան... Մարկօն յենվում էր նաւի ճնօտին և վշտահար մտածելով իւր մօր վրայ, դիտում էր այդ անեղր ծովը, մինչև որ աչքերը գոցվում էին և թմբած գլուխն ուսի վրայ կախ ընկնում: Այն ժամանակ նորից գալիս էր նոյն անձանօթ պատկերը, ցաւակցաբար նայում իրեն ու մեղմիւ կրկնում.—Մայրիկդ արդէն մեռած է...—Այս ձայնից խեղճ տղան յանկարծակի սթափվում էր ու դարձեալ շարունակում երազել, նոյն անփոփոխ հորիզոնը դիտելով:

Ճանապարհը տեւեց քսան և եօթն օր: Սակայն վերջին օրերը նախորդներից լաւ էին: Եղանակը գեղեցիկ էր, օդը զով: Մարկօն ծանօթացաւ մի բարեսիրտ լոմբարդացի ծեր մարդու հետ, որ գնում էր Ամերիկա որոնելու իւր որդուն: Որդին շինական էր՝ Ռօզարիօ քաղաքի մօտ հաստատուած: Մարկօն պատմեց ալեւորին իւր ընտանեաց գործերն, և ծերունին, բարեմտաբար նրա ծոծրակին խփելով, ասում էր.—Արիացիր, որդեակ իմ, դու մօրդ ողջ և առողջ կը գտնես:—Այս բարեկամութիւնը նրա սիրտը քաջալերեց ու ամոքեց: Մարկօն չիբուխ քաշող ծերուկի կըշտին, երգ երգող գիւղացիների հետ նաւառաջքի վրայ նստած՝ հարիւր անգամ երեւակայում էր իւր Բուէնօս Այլէս ժամանելը, չայտնի փողոցով անցնելը, կրպակի մէջ մտնելն ու ազգականի վրայ վազելը, դռնէլով.—Ի՞նչպէս է մօրս առողջութիւնը: Ո՞ր տեղ է նա: Գնանք նրա մօտ:—Իսկոյն կ'երթանք:—Նրանք միասին յառաջ են ընկնում, սանդուղներով վեր են վազում, դուռը բացում է... Եւ այստեղ նրա լուիկ մեռնախօսութիւնը դադարում էր, երեւակայութիւնը տե-

ղի էր տալիս անասելի քնքուշ զգացման, և նա թաքու՜ն համբուրելով վզին կախուած փոքրիկ խաչը, սկսում էր ջերմ աղօթք անել:

Ուղևորութեան քսան և եօթներորդ օրը նըրանք տեղ հասան: Մայիս ամսի մի գեղեցիկ առաւօտ շողեւնաւ խարխալ ձգեց ահագին Ռիօ դէ լա Պլատայի մէջ, որի եզերքին փռուած է Արգէնտինայի հասարակապետութեան Բուէնոս Այրէս մայրաքաղաքը: Այս սքանչելի եղանակը բարեգուշակ բան երևեցաւ Մարկօին: Նա քիչ մնաց խելքը թռցնէր սրտի սաստիկ խնդութիւնից: Նրա մայրը բացակայ էր միայն մի քանի մղոն: Մի քանի ժամից նա տեսնելու էր մայրիկին: Եւ նա ինքն էլ գտանվում էր այժմ Ամերիկայ, նոր աշխարհում, և քաջութիւն էր ունեցել մենակ գալու այդ աշխարհը... Ամբողջ երկար ճանապարհն իբրև թէ չանկարձ ի չիք դարձաւ: Նա կարծեց, թէ թռել է, երազել է և միայն այս րոպէիս արթնացել: Եւ նա այնքան երջանիկ էր, որ մինչև անգամ չզարմացաւ, չտխրեցաւ, երբ գրպանները քրքրելիս՝ չգտաւ և ոչ մէկն այն երկու քսակից, որոնց մէջ բաժանել էր իւր փոքրիկ գումարը, որպէս զի բոլորը միասին չկորցնէ: Այդ քսակները գողացել էին... և մնացել էր միայն մի քանի ֆրանկ: սակայն ինչ փոյթ, քանի որ նա մօտեցել էր մայրիկին: Նա պաշուսակը ձեռին բռնած՝ միւս խալացի ուղևորների հետ իջաւ մի փոքր շողեւնաւ, որ հասցրեց նրանց մինչև ափի մօտերքը: յետոյ մտաւ «Անլրէա Դօրիա» անուն կրող մակույկը, յետոյ ոտք դրաւ նաւահանգստի թումբի վրայ, բարև մը նաս ասաց լօմբարդացի բարեկամին ու մեծ մեծ

քաջեր անելով ճանապարհ ընկաւ դէպի քաղաքը: Առաջին իսկ փողոցում նա հարցրեց մի անցաւորի, թէ ի՞նչ ուղղութեամբ պիտի գնար, որ հասնէր «Դէ լօս Արտէս» *), կոչուած փողոցը: Պատահաբար հանդիպողը մի իտալացի բանուոր էր: Սա ուշի ուշով դիտեց տղային ու հարցրեց. — Արդեօք կարդալ գիտես: — Տղան այո պատասխանեց: — Ուրեմն, — ասաց բանուորը, — շարունակ չառաջ գնա, կարդալով անկիւններում փողոցների անունը. վերջապէս ուզեցածդ կը գտնես: — Տղան շնորհակալութիւն արաւ, և մտաւ իւր առջևի փողոցը:

Դա մի շիտակ, նեղ ու անվերջ փողոց էր. երկու կողմից կանգնած էին ամառանոցի նման սպիտակ սպիտակ ու ցած տներ. անց էին կենում անթիւ մարդիկ, կառքեր, սալեր, և օդը լի էր խլացուցիչ դղրդմամբ. տեղ տեղ ծածանվում էին ահագին և գոչն զգոչն դրօշակներ, որոնց վրայ խոշոր տառերով գրուած էր շողեւնաւների ալ և ալ քաղաք մեկնելու օրն ու ժամը: Մարկօն մի փոքր ինչ տարածութիւն անցնէր թէ չէ՝ տեսնում էր աչ ու ձախից երկու ուրիշ փողոցներ, որոնք նմանապէս տարածվում էին անվերջ գծով, նմանապէս ունէին սպիտակ ու խոնարհ տներ, նմանապէս մարդաշատ ու լազմակառք էին, — և նրանց ծալերը կտրուած էին անհուն դաշտավայրի ուղիղ գծով, որ նման էր ովկիանոսի հորիզոնին: Այդ քաղաքն անսահման թուեցաւ նրան: Նա կարծում էր, թէ կարելի է ամբողջ օրեր ու շաբաթներ թափառել և դարձեալ տեսնել

*) «Դեղարուեստների փողոց»:

նոր փողոցներ, ասես թէ բովանդակ Ամերիկան մի-
այն դրանցմով ծածկուած լինէր... Նա ուշադրու-
թեամբ դիտում էր փողոցների անունները—օտարո-
տի, դժուար կարդալու անուններ: Մի նոր փողոց
տեսնելուն պէս՝ սիրտը սկսում էր թնդալ, և նա
մտածում էր—այդ է ահա իւր խնդրածը: Նա դի-
տում էր ամեն մի անցաւոր կնոջ, կարծելով թէ իւր
մօրը կրհանդիպէ: Մի կին սաստիկ վախեցրեց նը-
րան. Մարկօն մօտեցաւ, լաւ դիտեց—նէզրուհի էր:
Այսպէս հասաւ նա մի անկիւն, վերնագիւրը կարդաց,
և քարացած կանգ առաւ մայթի վրայ: Այդ էր «Գե-
ղարուեստների փողոցը»: Նա մտաւ այդ փողոցը, տե-
սաւ 117 համարը. իւր ազգականի կրպակինն էր
175: Աւելի թուելով, քան քաջելով, յառաջ վազեց
և 171 համարի մօտ նորից կանգնեց, որ շունչ քա-
շէ: Նա ասում էր ինքն իրեն.—Ո՛հ, մայրիկ իմ, մայ-
րիկ իմ: Միթէ իրան տեսնելու եմ քեզ մի քանի
վայրկենից: Նա յառաջ սլացաւ և հասաւ մի փոք-
րիկ կրպակի: Դա էր 175 համարը: Ներս մտաւ: Տե-
սաւ մի գորշամազ, ակնոցաւոր պառաւ կին:

—Ի՞նչ ես ուզում, ա՛յ տղայ,—հարցրեց կինը
սպանիերէն:

—Արդեօք սա չէ,—ասաց Մարկօն, հազիւ մի
բառ արտասանելով,—Ֆրանչէսկօ Մէրէլլի խանութը:

—Ֆրանչէսկօ Մէրէլլին վախճանած է,—պա-
տասխանեց կինն իտալերէն:

Տղան կարծես թէ դաշոյնի հարուած ստացաւ
իւր կրծքին:

—Ե՞րբ է վախճանուել:

—Հէ՛յ, արդէն վաղուց,—ասաց կինը.—Արդէն

մի քանի ամիս կըլինի: Գործերը վատ էին գնում,
և նա փախաւ: Ասում են՝ Բահիա Բլանկա է գնա-
ցել, այս տեղից հեռու, և հասնելուն պէս՝ մեռել է:
Այն կրպակն իմ է: Դրան վրայ միայն մասնաւոր լոյս
է: Տղան երեսի գոյնը նետեց:

Յետոյ արագ արագ ասաց կնոջ.—Մէրէլլին ճա-
նաչում էր մայրիկիս, մայրիկս ծառայում էր պարոն
Մէքուլինէյի տանը: Միայն Մէրէլլին կարող էր ա-
սել ինձ, թէ հրտեղ է մայրիկս: Ես եկել եմ Ամերի-
կա մայրիկիս որոնելու: Մեր նամակները Մէրէլլին
էր հասցնում նրան: Ես պիտի գտնեմ մայրիկիս:

—Խեղճ որդի,—պատասխանեց կինը,—լինչպէս
անենք: Սպասիր, գնամ կանչեմ աշակերտիս: Նա ճա-
նաչում էր Մէրէլլի սպասաւորին. գուցէ մի բան
իմանայ...

Կինը գնաց կրպակի ետեւի մասն ու կանչեց
պատանուն, որ և իսկույն ներս եկաւ.—Հապա ասա,
—հարցրեց նրան պառաւը,—չէս յիշում, որ Մէրէլ-
լի սպասաւորն երբեմն երբեմն նամակներ տա-
նում լինէր մի կնոջ մօտ, որ Մէքուլինէյի աղա-
խինն էր:

—Պարոն Մէքուլինէյի,—պատասխանեց պա-
տանին,—այո, տիկին, մի քանի անգամ նամակ տա-
րաւ: «Գեղարուեստների փողոցի» ճաշը:

—Ո՛հ, տիկին, շնորհակալ եմ,—գոչեց Մար-
կօն.—Միայն ասացէք ինձ համարը... 2էք իմանում:
Տուէք ինձ մի առաջնորդ,—ցոյց տուր ինձ ճանա-
պարհը, ա՛յ տղայ, ես դեռ ունիմ սօլդիներ:

Եւ նա ասաց այս բոլորը մի այնպիսի ջերմու-
թեամբ, որ պատանին տիկնոջ հրամանին չսպասած՝

պատասխանեց. — Գնանք, — և առաջինը դուրս ելաւ արագ արագ քաջերով, — մի մտաւ չափաւ ամ. — Նրանք հապճեպ վազելով, առանց մի բառ ասելու, հասան մինչև փողոցի ծայրը, մտան մի սպիտակ տան բակի դուռն և կանգ առին մի երկաթէ ցանկի առջև, որի միւս կողմը ծաղկի պուտուկներ էին երևում: Մարկօն զանգակի լարը քաշեց:

Դուրս եկաւ մի օրիորդ, — արագ վազելով. — Այս տեղ է բնակում Մէքուինէյի ընտանիքը, այնպէս չէ, — հարցրեց տազնապալից մանուկը:

— Բնակում էր, — պատասխան տուաւ օրիորդը, իտալերէնը սփանիերէնի պէս շեշտելով: — Այժմ մենք ենք այս տեղը կենում: — մեր ազգանունն է Զէբալլօս:

— Բայց ո՞ր տեղ են չոգել Մէքուինէյները, — հարցրեց Մարկօն սրտատրոփ:

— Նրանք չոգել են Կօրդօվա:

— Կօրդօվա, — գոչեց Մարկօն: — Ո՞րտեղ է այդ Կօրդօվան: Իսկ այն կիներ, որ նրանց մօտ էր ծառայում... այն կիներ, մայրիկս: Նրանց աղախինը իմ մայրն էր: Միթէ մօրս էլ իրենց հետ տարան:

Օրիորդը դիտեց նրան ու ասաց. — Չգիտեմ: Գուցէ հայրս գիտենայ: Հայրս նրան ճանաչում էր: Սպասեցէք մի վաչրկեան, — ասաց օրիորդը: — Չգիտեմ չափաւ և շատ չանցած չետ եկաւ իւր հօր հետ, որ սպիտակ մօրուքով մի բարձրահասակ պարոն էր: Սա մի վաչրկեան աչքէ անցրեց շիկահեր ու արծուէքիթ գէնուացի նաւորդի համակրելի կերպարանքն և հարցրեց նրան գեղջուկ իտալերէն բառբառով. — Քո մայրը գէնուացի է:

Մարկօն պատասխանեց. — Այո: Գոյնացիք ընդ. — Ի՜նչ ուրեմն գէնուացի աղախինը նրանց հետ գնաց. այդ ինձ հաստատ չաչնի է: Են ընտանիքս: — Բայց ո՞ր գնացին: Բշտապումս չիմանալաց. — Կօրդօվա. մի քաղաք է: Են մայրս ընդ. — Տղան հառաչեց, և չետոյ անտրտունջ հնազանդութեամբ ասաց. — Ուրեմն... ուրեմն էս էլ կ'երթամ Կօրդօվա:

— Ah pobre niño! — գոչեց պարոնը, կարեկցաբար նրան նայելով: — Խեղճ մանուկ, Կօրդօվան այս տեղից հարեւրաւոր մղոններով հեռու է:

Մարկօն մեռելի պէս գունաթափ եղաւ և յանկարծ ընկաւ վանդակի վրայ: — Տեսնե՛նք, տեսնե՛նք, — ասաց խիղջն գորովելով պարոնն և դուռը բաց արաւ. — Եկ ներս մտի՛ր, տեսնե՛նք, գուցէ մի հնար գտնենք:

Նա նստեցրեց Մարկօին, պատմել տուաւ իւր արկածքը, ուշի ուշով ականջ դրաւ ու մի քանի րոպէ լուռ մնաց: Ապա թէ կարճ հարցրեց. — Փող ունի՞ս:

— Ունիմ... Ելի ունիմ փոքր ինչ բան, — պատասխանեց Մարկօն:

Պարոնը դարձեալ մի քանի վաչրկեան մտածեց, չետոյ նստաւ սեղանի առջև, մի նամակ գրեց, կրնքեց ու տղային յանձնելով, ասաց. — Լսի՛ր, փոքրիկ իտալացի: Այս նամակով Բօկա կ'երթաս: Դա մի փոքրիկ ու կիսով չափ գէնուական քաղաք է, երկու ժամ այս տեղից հեռու: Ամեն մարդ ցոյց կ'ըտայ քեզ ճանապարհը: Կ'երթաս այն տեղ և կ'որոնես այն պարոնին, որին որ գրում եմ նամակս, նրան ամենաքը ճանաչում են: Այս նամակը նրան կ'ըտաս: Նա

հոգ կրտանէ, որ դու վաղն իսկ ճանապարհ ընկնիս
դէպի Ռօզարիօ քաղաքը, և կըլնանձնարարէ քեզ
այնտեղաբնակ մի մարդու, որ և հնար կըտայ քեզ
շարունակել ճանապարհդ մինչև Կօրդօվա. Կօրդօվա-
յում դու կըգտնես Մէքօւինէցի ընտանիքն ու մայ-
րիկիդ: Առժամանակ վերցուր այս...

Եւ նա դրաւ տղայի ձեռք մի քանի ֆրանկ:

— Գնա, կտրիճ եղիր. ճանապարհին ամեն տեղ
ազգակիցներ կըտեսնես, անօգնական չես մնալ: Բա-
րեւ երթաւ:

— Զնորհակալ եմ, — ասաց տղան՝ առանց ուրիշ
խօսք գտնելու, և պաշտօնակը վերցնելով՝ դուրս ե-
լաւ: Այն տեղ հրաժեշտ առաւ իրեն բերող պատա-
նուց և ծանրաքալ ճանապարհ ընկաւ դէպի Բօկա:
Տըտում էր նրա սիրտն և միանգամայն լի հիացմամբ
այն աղմկալի ու մեծաշէն քաղաքի վրայ, որի փո-
ղոցներով անց էր կենում:

Ինչ որ պատահեցաւ նրան սկսեալ այդ ընթացի-
քից մինչև չաջորդ օրուայ երեկոյն, — այդ բոլորը տենդա-
չին ցնորքների պէս խառն ու շփոթ հետք թողաւ
նրա մտքում, — այն աստիճան յոգնած էր նա, վրը-
գովուած ու տագնապած: Նա գիշերեց Բօկայում, մի
սենեակի մէջ, մի նաւամատուցի բեռնակրի հետ, և
գրեթէ ամբողջ օրը նստած մնաց գերանների վրայ,
կարճես թէ երազի մէջ դիտելով հազարաւոր մեծ
նաւեր, մակույկներ ու փոքրիկ շոգենաւեր, որոնք անց-
նում էին իւր առջևից: Հետեւեալ օրուայ արշալուսին
նա արդէն գտանվում էր մի առաքաւստաւոր, պը-
տուղներով բեռնաւորուած նաւի վրայ, որ գնում էր
Ռօզարիօ: Թիափարներն էին երեք արեակէզ գէ-

նուացիք. այդ մարդկանց հնչիւնն ու սիրելի բար-
բառը փոքր ինչ սփոփեց Մարկօին:

Նրանք չու ընկան, և նաւարկութիւնը տեւեց
երեք օր ու չորս գիշեր: շարունակ ապշեցնելով մեր
փոքրիկ ուղևորին, — երեք օր ու չորս գիշեր այն
հրաշալի Պարանա գետի վրայ, որի հետ համեմատե-
լով Խտալիայի ամենամեծ Պօ գետը մի հասարակ ա-
ռուակ է: Նաւակը ծանր ծանր շառաջ էր գնում այդ
ահագին ջրառատ հոսանքի դէմ: Նաւորդները բեր-
վում էին ուռիի ու նարնջի ծառերով ծածկուած,
ջրասոց անտառների նման երկայն ու ձիգ կղզիների
եզերքով, որոնք երբեմն վագրերի ու օձերի որջ էին
կազմել: Մերթ անցնում էին նեղ ու նուրբ նեղուց-
ներով, որոնք կարճես թէ ամենաին ելք չունէին.
մերթ մտնում էին մեծ ու հանդարտ լիճերի նման
լայնափիւռ ջրերի մէջ: յետոյ դարձեալ սահում էին
կղզիների փերով, ոլորապտոյտ ջրանցքներով և ան-
ընդհատ անտառներով: Ամեն ուրեք խոր լուծիւն:
Նրկար ժամանակ փերն ու ջրերը մի նորագիւտ
գետի պատկեր էին ներկայացնում, ուր դեռ երբէք
նաւ չէր սահել: Մարկօն այդ վիթխարի գետի վրայ
նաւորդելիս ժամ առ ժամ վհատում էր: Նրան թը-
ւում էր, թէ իւր մայրն ականքների մօտ բնակում
կըլինի և նաւարկութիւնը դեռ տարիներ կըտևի:
Նա ու թիափարներն օրն երկու անգամ ուտում էին
փոքր ինչ հաց ու ապուխտ: Թիափարները տեսնելով
նրան միշտ տրտում, բնաւ հետը չէին խօսում: Գի-
շերները նա քնում էր տախտակի վրայ և ստէպ
յանկարճ զարթում էր խրտնելով լուսնեակի սպիտակ
լուսից, որ նսեմ գոցն էր տալիս անհուն ջրերին ու

Հ 1022-2013

(1012/41)



հեռաւոր անքերին, և նրա սիրտը կծկվում էր:— Կօր-
դօվա:— Նա կրկնում էր Կօրդօվա անունն, իբրև մի
գարմանահրաշ քաղաքի անուն, որ կարճես թէ հե-
քիաթներում լսած լինէր: Յետոյ մտածում էր:—
Մայրիկս էլ անց է կացել այս տեղերով, նա էլ տեսած
կըլինի այս կողին, այս եղերքը, — և այնուհետև այդ-
տեղերն, որոնց վրայով մօր աչքերն երբեմն տահած
պիտի լինէին, այնքան օտար, այնքան տխուր չէին
թւում պատանուն... Մի գիշեր նաւաստներից մէկն
երգեց: Այդ դաշնակը լսելիս Մարկօն չիշեց իւր
մօր երգն, որով սիրում էր օրօր ասել: Պերջին գի-
շերը, այդ երգի գեղգեղանքին ականջ դնելով, նա
լաց եղաւ: Նաւաստը դադարեց երգելուց ու գոչեց:—
Սիրտ առ, այ տղա: Սատանան ինձ տանի: Մարդս
լինի գէնուհացի ու լաց լինի, թէ հաչրենիքից հեռու
է: Գէնուհացիք բոլոր աշխարհս չափչփում են չաղ-
թանակով ու փառքով: Այս խօսքերից տղան ազատ
շունչ քաշեց, գէնուհացի արիւն զգաց իւր սրտում
և գլուխը քաջ քաջ բարձրացնելով, ձեռքով զարկաւ
թիակին:

— Այո, — ասաց նա ինքն իրեն, — եթէ անգամ
ամբողջ աշխարհն անցկենայու լինիմ, եթէ անգամ
տարիներով շրջելու, հարիւրաւոր մղոններ հետի կրտ-
րելու ստիպուած լինիմ, դարձեալ պիտի յառաջ եր-
թամ, մինչև որ դտնեմ մաշիկիս: Թող շնչասպառ
հասնեմ նրան ու մեռնեմ իւր ոտքերի տակ: Գոնէ
մի անգամ տեսնեմ նրան, այնպէս մեռնեմ: Բաջու-
թիւն:— Եւ այնպէս արիացած՝ մի վարդագոյն առա-
ւօտ հասաւ նա Պարանայի ափին նստած Ռօզարիօ
քաղաքն, ուր ջրի մէջ ցլանում էին ամեն ազգերին

պատկանող անթիւ նաւեր զբօշակազարդ կայմերով:

Մարկօն նաւից իջնելուն պէս, պաշտօնակր ձե-
ռին բռնած, բարձրացաւ գէպի քաղաքը՝ գտնելու
համար այն պարոնին, որի հասցէով մի յանձնարարա-
կական տոմսակ ունէր իւր բօկացի հովանաւորից:
Ռօզարիօն արդէն մի ծանօթ քաղաք երևցաւ նը-
րան: Դա էլ ունէր ուղիղ, անվերջ փողոցներ սպի-
տակ ու ցած տներով, տների վրայից անց էին կե-
նում, սարդիոստայնի նմանութեամբ, հեռագրի ու
հեռաձայնի անթիւ թելեր, սաստիկ էր մարդկանց,
ձիերի և կառքերի շոինդն ու ժխորը: Մարկօի միտ-
քը շփոթուեցաւ, նրան այնպէս էր թւում, թէ նո-
րից է եկել Բուէնօս Այրէս և նորից պիտի որոնէ
ազգականին: Նա շրջեց ցրեթէ կէս ժամ, այս կողմ,
այն կողմ դիտելով, և երկար հարցմունք անելուց
յետոյ՝ վերջապէս գտաւ իւր նոր հովանաւորի բնա-
կարանը: Զանգակը քաշեց, Դրան մէջ երևցաւ մի
բարձրահասակ, խարտեաշ ու նեղսիրտ մարդ, որ մի
տնտեսի կերպ ունէր, և անքաղաքավար, օտար
հնչմամբ հարցրեց. — Ո՞ւմն ես ուզում:

— Տղան ասաց պարոնի անունը: —
— Պարոնն և իւր ընտանիքն անցեալ իրիկուն
Բուէնօս Այրէս գնացին, — պատասխանեց տնտեսը:

— Տղայի լեզուն կապուեցաւ:

— Բայց ես, — այս տեղ ես ոչ ոք չունիմ, ես
մենակ եմ, — թողովեց նա և յանձնեց մարդուն
տոմսակը:

Տնտեսն առաւ տոմսակը, կարդաց և դաժան
դաժան նկատեց. — Այդ իմ բանը չէ: Տոմսակը կրտամ
պարոնին մի ամսից յետոյ, երբոր նա վերադառնայ:

— Բայց ես, ես մենակ եմ, անտէր եմ, — գոչեց տղան արեւոսբար։

— Է՛հ, ինձ ինչ, — ասաց միւսը։ — Մի՞թէ քո երկրից Ռօզարիօ եկած շրջմուկները հերիք չեն։ Գնա՛ կորիւր Խոտալիս և այն տեղ մուրա։ — Եւ նա տրդալի քթի առջև դուռը փակեց։ Մարկօն մնաց բարկտրած։

Յետոյ վերցրեց իւր պաշտասակն ու լուի մնջիկ հեռացաւ սիրտը կոտրած, ուղեղը վառուած ու մի վաշիկեցում հագարաւոր տխուր մտքերով պաշալուած։ Ի՛նչ անէր, ի՛նչ գնար։ Ռօզարիօից մինչև Կօրդօվա մէկ օրուայ ճանապարհ էր երկաթուղով։ Նա դեռ ունէր մի քանի Ֆրանկ, բայց օրուայ պէտքերը հոգալուց յետոյ ոչ մի Ֆրանկ մնալու չէր։ Ամբօւ ծախքն ի՞նչ տեղից գտնէր։ Կարող էր աշխատել։ Սակայն ինչպէս և ումից խնդրէր, որ գործ տան։ Մուրմար... Ո՛հ, ո՛չ։ Լաւ էր մեռնել, քան թէ վռնտուիլ, հաչոցուիլ ու անարգուիլ, ինչպէս որ եղաւ փոքր ինչ առաջ։ — Եւ Մարկօն այս միտքը չղանալուն պէս, երբ նորից նայեց անսահման դաշտավայրում անհետացող երկայն փողոցի պատկերին, — զգաց, որ արիւթիւնը խոցւ էր տալիս իւր սրտից։ Նա պաշտասակը մայթի վրայ ձգեց, կռնակը պատին տալով վրան նստաւ և երեսը ձեռքերի մէջ թաքցրեց՝ չուսահատ, բայց առանց լաց լինելու։

Անցորդները հրում էին նրան դռքերով. փողոցը հնչում էր վազող կառքերի դղրմամբ։ Մի քանի տղերք կանգ առին դիտելու նրան։ Նա՛ մնաց այսպէս մի քանի ժամ։

Յանկարծ նա ցնցուկով լսեց մի ձայն, որ

հարցնում էր իտալերէն ու լօմբարդերէն։ — Ի՛նչ է պատահել քեզ, ա՛յ տղայ։

Այս խօսքերը լսելուն պէս Մարկօն գլուխը բարձրացեց և զարմաման աղաղակ արձակելով, ոտքի թռաւ։ — Դո՛ւք այս տեղէ։

Դա էր ծեր լօմբարդացի գեղջուկը, որի հետ նա ծանօթացել էր ճանապարհին։

Գեղջուկի զարմանքը Մարկօնից պակաս չէր։ Սակայն Մարկօն հարցմունք անելու ժամանակ չբռնուաւ ծերուկին և մեծ արագութեամբ իւր արկածները պատմեց նրան։ — Այժմ ահա փողս հատել է։ Հարկաւոր է աշխատել. գտէք ինձ որ և է գործ, որ հնար ունենամ մի քանի Ֆրանկ վաստակելու։ Ես ամեն բան կարող եմ անել՝ հակեր կրել, փողոց աշխուրդ, պատուէրներ հոգալ, նաև դաշտում մշակութիւն անել։ Ես սև հացով էլ գոհ կլինիմ. միայն թէ շուտով կարողանալի ճանապարհ ընկնել ու մօրս գտնել. բարի եղէք, գործ գտէք, գործ գտէք ինձ համար։ Ի սէր Աստուծոյ, որովհետեւ էլ դիմանալու հնար չունիմ։

— Սատանայի ոտը կոտորուի, — ասաց գիւղացին, շուտ գալով ու ծնօտը քորելով։ — Ա՛յ քեզ պատմութիւն... Գործ... հեշտ է ասել։ Տեսնե՛նք։ Գուցէ կարելի լինի մեր հալքենակիցների շրջանում մի երեսուն Ֆրանկ ձեռք բերել։

Տղան նայում էր վրան, չուսոյ նշույով զօրացած։

— Հետո եկ, — ասաց նրան գեղջուկը։

— Ո՛ւր ենք գնում, — հարցրեց տղան, պաշտասակը վերցնելով։

— Ե՛կ, ասում եմ։

Գեղջուկը գնաց. Մարկօն էլ ետևից. անցան բաւական երկայն ճանապարհ առանց իրար հետ խօսելու: Գեղջուկը կանգ առաւ մի գինետան դրան առջև, որի նշանակը մի աստղ էր՝ „La estrellita de Italia“ — Իտալիայի աստղը վերնագրով. նա գլուխը ներս խոթեց ու շուռ գալով գէպի տղան, զուարթ ասաց. — Լա վաչրկենի վրայ հայտնաբերեցի մի մեծ սենեակ, ուր շարունակ էին շատ սեղաններ. այն տեղը նստած էին բազմաթիւ մարդիկ, խմելով ու բարձրաձայն խօսակցելով: Ծեր լոմբարդացին մօտեցաւ առաջին իսկ սեղանին. նրա ողջոյն տալու եղանակից կարելի էր իմանալ, թէ ինքն էլ փոքր ինչ առաջ ընկերացել էր այդ սեղանի շուրջը նստած վեց հիւրերին: Նրանք բոլորն էլ կարմրած էին և բաժակները շփակացնելով խօսում էին ու ծիծաղում:

— Ընկերներ, — ասաց լոմբարդացին առանց երկար մտածելու, չառաջ քաշելով Մարկօին, — ահա մի տղայ. մեր երկրից է, Գէնուաից — մենակ եկել է Բուէնօս Ալբէս՝ իւր մօրը գտնելու համար: Բուէնօս Ալբէսում սրան ասում են. — Մայրդ այս տեղ չէ, Կօրդօվա է: — Տղան նաւակ նստելով գալիս է Ռօզարիօ. ձեռին մի տոմսակ բռնած՝ երեք օր ու չորս գիշեր ճամբորդում է. տալիս է տոմսակն ում որ պէտք է — նրան թիթու գէմքով դուրս են բշտում: Այժմ չունի ոչ մի սանտիմ: Դրութիւնը շատ վատ է. բաց սիրտ ունեցող կտրիճ է: Եկէք, մի դարման մտածենք. չենք կարող արդեօք այնքան գումար հաւաքել, որ հնար տանք սրան մինչև Կօրդօվա հասնելու և իւր մօրը տեսնելու: Միթէ համբերենք, որ սա շան պէս անտէր մնայ այս երկրում:

— Ոչ երբէք, ոչ, ոչ. այդպիսի բան մեր մշտքովն անգամ չի անցնիլ, — գոչեցին ամենքը միասին, բռունցքով սեղանին խփելով: — 2^է որ մեր հայրենակիցն է: — Այս տեղ եկ, այ տղայ: — Գիտես, ովքեր ենք: — Գաղթականներ: — Տեսէք, ինչպէս սիրուն կտրիճ է: Դէհ, ընկերներ, սանտիմները հանեցէք: — Բռավօ: Մենակ է եկել: Ապրի՛ այս տղան: Ինչ սիրտ ունի: — Ե՛կ դատարկիր այս բաժակը, հայրենակից: — Միամիտ եղիլ, մենք կը հասցնենք քեզ մաշրիկիդ: — Եւ մէկը նրա թուշը կամթեց, միւսն էլ թաթը ուսին դրաւ, երրորդը նրա պաշուսակը վերցրեց. միւսներն էլ սեղաններից վեր կացան ու մօտեցան տղային. նրա պատմութիւնը մի ըրպէյում գինետան մէջ տարածուեցաւ. կից սենեակից երկու արգէնտացի հիւրեր եկան. տասն ըրպէյում լոմբարտացի գեղջուկը, զգալի ձեռին պտոյտ գալով, երկու հարիւր քառասուն փրանկ հանգանակեց: — Տեսա՛ր, ինչպէս շուտ է բան շինվում Ամերիկայում, — ասաց նա Մարկօին: — Խմի՛ր, — գոչեց միւսը, նրան մի բաժակ գինի տալով: — Քո մաշրիկի կենանց: — Ամենքն էլ բաժակները վերցրին: — Եւ Մարկօն կրկնեց — Խմ մաշրիկի... — Սակայն ուրախութեան փղձուկը թոյլ չտուաւ նրան խօսելու, և նա, բաժակը սեղանի վրայ դնելով, ձերուկի վզին փարուեցաւ:

Յաջորդ օրն իսկ, արշալուսին նա համարձակ ու զուարթ, ժպտուն ժպտուն յոյսերով ճանապարհ ընկաւ գէպի Կօրդօվա: Սակայն աշխարհիս երեսին չկայ և ոչ մի խնդութիւն, որ դիմանար տխուր բռութեան պատկերին: Եղանակը մռայլ էր, օդը մթագին. գրեթէ դատարկ կառախումբը սլանում էր անմարդաբնակ դաշտերով: Մարկօն մենակ նստած էր մի եր-

կայն՝ վերաւորները կառքի նման կառքի մէջ: Մտիկ էր տալիս դէպի աջ, մտիկ էր տալիս դէպի ձախ և ոչինչ չէր տեսնում, բայց եթէ մի անսահման ու ամաչի անապատ, որի վրայ ցիր ու ցան կանգնած էին չոր բներով վտիտ ծառեր. այդպիսի աղիողորմ ու տրուպ ծառեր նա իւր օրում չէր տեսել: Մթագոյն ու ազագուն բուսականութիւնը մի անվերջ գերեզմանատան կերպ էր տալիս դաշտավայրին: Մարկօն նիւրհեց մի կէս ժամ ու նորից նայեց. տեսարանը դարձեալ նոյնն էր: Երկաթուղու կայարանները ճգնաւորի խրճիթի պէս դատարկ էին և երբ կառավարմամբ գալիս էր, ոչ մի ձայն չէր լսվում: Մարկօն մի անապատի մէջ տեղում մոլորուածի նման էր: Ամեն մի իջևան հասնելուն պէս կարծում էր, թէ արդէն դա վերջինն է և դրանից յետոյ գալու է վայրենիների ահաւոր ու սոսկալի երկիրը... Մի սառնաշունչ օդ փչեց նրա երեսին: Ապրիլի կէսին, երբ նա Գէնուաից մեկնեցաւ, հայրը մտքովն անգամ չէր անցրել, թէ որդին ձմերուկայ ցուրտ պիտի գրտնէր Ամերիկայում, և սուել էր նրան ամարուկայ շորեր: Մի քանի ժամից յետոյ Մարկօն սկսաւ ցրտից դողալ և ցրտի հետ միասին զգալ մի ծանր յոգնութիւն, որ անցած տագնապալից օրերի, անքուն ու վրդովիչ գիշերների հետևանքն էր: Նա քնեց, երկար քնեց, և արթնացաւ ցրտից պաղած ու փայտացած: Նա զգաց, որ տկար է, և սարսափահար սկսաւ մտածել թէ պիտի հիւանդանայ ու մեռնի ճանապարհին, դէն ձգուի ամաչի ու սգաւոր անապատում, յօշատուի վայրի շներից ու գիշակեր թռչուններից, նման այն ձիւրի ու կովերի դիակներին, որոնք ըն-

կած էին երկաթուղու երկայնութեամ, և որոնց տեսքից նա սարսափով յետ էր դարձնում աչքերը: Տկաբութեան զգացմունքից իւր սրտի վրդովմունքը սաստկացաւ, և երևակայութիւնը՝ շրջակայքի սգաւոր տեսարանից խուճապած, անզսպելի ընթացք առաւ:— Երգեօք հաւաստի էր, թէ կըտեսնէ մօրը Կօրդօվայում: Հապա եթէ մաշնն այն տեղ չլինի: Հապա եթէ «Գեղարուեստների փողոցի» պարոնը սխալուած լինի... Հապա եթէ մաշնիկը մեռած լինի... Այս խռովալոյզ մտքերով նա դարձեալ քուն եղաւ, և երազ տեսաւ, որ իբր թէ գիշերով Կօրդօվա է ժամանել և ամեն դռներից, ամեն պատուհաններից ձայներ են հնչում:—Նա այս տեղ չէ, նա այս տեղ չէ, նա այս տեղ չէ:—Մարկօն գարհուրելով վեր թռաւ ու նըշմարեց կառքի անկիւնում խաչտաճամուկ շալեր հագած երեք մարդ, երեք ստուեր, որոնք նրան դիտում էին և կամայուկ խօսակցում: Զանթի արագութեամբ կասկած ընկաւ նրա միտքը, թէ աւագակներ պիտի լինին, որոնք եկել են նրան սպանելու և պաշտօնակը խլելու... Ցրտի ու տկարութեան վրայ այժմ երկիւղն էլ աւելցաւ. իւր երևակայութիւնը, որ արդէն բաւական գրգռուած էր, չափից անցաւ... Այն երեքը շարունակ դիտում էին Մարկօին. մէկը նրա կողմը գնաց... Մարկօն՝ խելքը միտքը կորցրած, բռնեց քները վերցնելով, անձանթի դէմ փաղեց ու գոռաց.— Ես ոչինչ չունիմ: Ես մի խեղճ տղայ եմ: Ես գալիս եմ Իտալիայից և գնում որոնելու մաշնիկիս. ես մենակ եմ. վատութիւն մի անէք ինձ:—Մարդիկն իսկոյն նրա վիճակը հասկացան, կարեկցութիւն զգացին ու սկսան զգուէլ նրան այլ և այլ խօս-

բերով, որոնց իմաստը նա բնաւ չհասկացաւ: Տղայի ատամները զնդզնգնում էին. անձանօթները մի շալ ճաճկեցին վրան և խնդրեցին, որ նորից պառկէ ու քնի: Եւ նա քնեց: Երբ որ նրան զարթեցրին, արդէն հասել էր Կորդօփ:

Ո՛հ, ինչպէս ազատ շունչ քաշեց և ինչպէս արագ դուրս ցատկեց նա կառքից: Նրա առաջին հարցմունքն այն էր, թէ ո՞ր տեղ է բնակում Մէքուինէյց ճարտարապետը. կայարանի սպասաւորը մի եկեղեցու անուն տուաւ.—տունն եկեղեցու մօտերքումն էր.—տղան իսկոյն ճանապարհ ընկաւ: Գիշեր էր: Նա հասաւ քաղաք և երկրորդ անգամ Ռօզարիօ եկած կարծեց ինքն իրեն, երբոր տեսաւ այն սպիտակ ու փոքր տներով ուղղաձիգ փողոցներն, որոնք կտրվում էին ուրիշ երկայն փողոցներով: Սակայն փողոցները բազմամարդ չէին. սակաւաթիւ լապտերներէ աղօտ լուսով նա տեսնում էր սև ու կանաչ գոյն ունեցող օտարոտի երեսներ, և աչքերը բարձրացնելիս նկատում էր տարօրինակ ձևով շինուած տաճարներ, որոնք անհետեթ մեծութեամբ, սև սև որոշվում էին երկնքից: Քաղաքը մուսլու լուիկ էր. բայց ահագին անապատն անցնելուց յետոյ՝ այդ անդորր մուսլու-թիւնն էլ նրան սիրելի երևցաւ: Նա դիմեց մի քահանայի, շուտով գտաւ եկեղեցին ու տունը, գողգոթ ձեռով զանգակի լարը քաշեց և միւս ձեռը կուրծքին դրաւ, որպէս զի հանդարտեցնէ իւր սիրտը, որ կարծես ուզում էր դուրս թռչել կոկորդից:

Մի պառաւ կին, ձեռին մօմ բռնած, եկաւ ու դուռը բաց արաւ:

Տղան չկարողացաւ անմիջապէս բան ասել:

—Ո՛ւմն ես ուզում,—հարցրեց կինը սպանիւրէն:

—Մէքուինէյց ճարտարապետին,—ասաց Մարկօն: Պառաւը կուրծքին դրաւ ձեռքերն ու գլուխը տատանելով պատասխանեց.—Ուրեմն դո՛ւ էլ ես Մէքուինէյցին կամենում: Տէ՛ր ողորմեա՛ւ: Կարծես ժամանակ է, որ այդ հարցմունքները վերջանան: Արդէն երեք ամիս է, որ ամենքը մեզ ձանձրացնում են: Հերիք չէ որ լրագիրներում տպուեցաւ. պէտք կըլինի պատերին էլ կպցնել, թէ պարոն Մէքուինէյցը Տուփուման է գնացել:

Տղան յուսահատութեան շարժմունք արաւ: Յետոյ գայլութեամբ բացականչեց.—Այս ինչ նզոված քան է: Ուրեմն ինձ կըմնայ՝ գնալ մեռնել փողոցում՝ առանց մօրս տեսնելու... Խելագարուելու վրայ եմ, սպանիւր ինձ: Աստուած իմ: Ի՛նչպէս է այն քաղաքի անունը: Ո՞րտեղ է գտանվում: Հեռու է, մօտիկ է:

—Այ խեղճ մանուկ,—պատասխանեց պառաւը վարեկցաբար.—Մօտիկ է, հեռու չէ: Կը լինի այս տեղից շատ շատ՝ չորս կամ հինգ հարիւր մղոն:

Տղան երեսը ձեռքերով ճաճկեց. չետոյ՝ ասաց հեկեկալով.—Հապա այժմ... Ի՛նչ անեմ ես այժմ:

—Ի՛նչ ասեմ քեզ, ինքս էլ չգիտեմ, խեղճ տը՜ղայ,—պատասխանեց պառաւը:

Սակայն չանկարճ մի բան չիշելով, շուտ շուտ ասաց.—Լսի՛ր, միտքս բան ընկաւ: Գինա մեր տան հանդէպ՝ դէպի աջ. երրորդ դուռը մի բակի դուռ է. այն տեղ կայ մի «Վապատաց» վաճառական, որ վաղըն իւր սալով ու եգներով գնալու է Տուկուման. վազիր ու տես, արդեօք չի՞ կամենալ քեզ էլ իւր հետ վերցնել, եթէ նրան ծառայութիւն խոստանաս. դու-

ցէ տալ քեզ մի փոքրիկ տեղ սալի մէջ. շուտով գնա-
մովցա Տղան պաշտօնակը վերցրեց, շնորհակալ եղաւ և
արագ արագ գնալով մտաւ լապտերներով լուսաւո-
րուած մի մեն բակի տւր շատ մարդիկ ահագին սալ-
լերը պողի պարկերով բեռնաւորելու վրայ էին: Գոր-
ծի ղեկավարն էր վիթխարի կօշիկներ հագած և ուսե-
րի վրայ սև ու սպիտակ շերտերով կրկնոց ձգած մի
բարձրահասակ պեխաւոր մարդ: Տղան մօտեցաւ աց-
մարդուն և երկիւղով յայտնեց նրան իւր խնդիրը:—
Ես գալիս եմ Իտալիայից և որոնում եմ մայրիկիս,—
աւելացրեց նա: Երբ մօտեցաւ մարդ-
ն, Կապատացը, որ ասել է կարավանի առաջնորդ,
չափեց նրան գլխից մինչև ոտքերն և չոր չոր պա-
տասխանեց:—Ես ոչ մի արձակ տեղ չունիմ:
—Մօտս կալ տասն և հինգ ֆրանկ,—ասաց
տղան պաղատելով:—ացդ բոլորը ձեզ կըտամ: Անա-
պարհին ես ձեզ համար կ'աշխատեմ: Ես չուր կրկրեմ
ու եզներին կեր կըտամ. ամեն ճառագութիւն կ'ա-
նեմ: Մի կտոր հաց էլ որ տաք,—հերիք է: Աղա-
չում եմ, շնորհեցէք ինձ մի փոքրիկ տեղ:

Կապատացը նորից նայեց Մարկօին և այս ան-
գամ փոքր ինչ աւելի մտերմութեամբ պատասխանեց.
—Տեղ չկալ... և չետոյ... մենք Տուկուման չենք գը-
նում, սալ գնում ենք ուրիշ քաղաք: Մանտրագօ
գէլլ Խստէրծ: Անապարհին որ և է տեղ մենք քեզ
մենակ կըթողնենք, և դու ստիպուած կըլինիս դար-
ձեալ մի երկացն արածութիւն ոտքով անցնել:

—Ախ, ես կրկնապատիկը պատրաստ եմ անցել,
—գոչեց Մարկօն:—Ես կ'երթամ, այլ մասին մի մը-
տածէք: Ինչպէս էլ լինի, ես կըհասնեմ Տուկուման.

միայն թէ մի փոքրիկ տեղ շնորհէիք ինձ: Դ՛վ պա-
րոն: Ի սէր Աստուծոյ, Աստուծոյ սիրուն, մի թող-
նէք ինձ այս տեղ մենակ:

—Իմացիր, որ ճանապարհը քսան օր պիտի տևի:
մայրիկ —հոգ չէ: Ես քեզ մէջ զօրակց կ'ընտրեմ:
Վշտիկ —Դժուար, ճանապարհ է: Իրողմիտացն մայրիկ
յատ —Ամեն բանի կըհամբերեմ:
—ազգ —Քեզ պէտք կըլինի մենակ անցնել բաւական
երկար ճանապարհ: Ես ասի նոյնի դիմաւ ձեռք
ու ինչ —Ոչ մի բանից չեմ վախենում: Միայն մաշի-
մ կիս գտնէի: Գթացէք ինձ: Իրողմիտացն մորաւ
միջ իմ Կապատացը մի լապտեր բռնեց նրա գէմքի առջև
և և ուղի ուղով գննեց նրան: Յետոյ ասաց:—Ի՜նչ լաւ:
—ո՞չ մի Տղան նրա ձեռը համբուրեց: Գմբապատաց
միջմիջ —Այս գիշեր դու սալերից մէկում կըքնես, —ա-
նաց Կապատացը, նրան թողնելով, —վաղն առաւօտ չորս
ժամին կըգարթեցնեմ: Buenas noches —բարի գիշեր:
միջմիջ Առաւօտեան չորս ժամին, աստղերի լուսով,
—սալերի երկացն կարաւանն ահագին դողդոցով ճա-
նապարհ ընկաւ: Ամեն մէկ սալին յճուած էր վեց
պղեց եզն. ամբողջ գնացքին հետևում էր գրաստների
ըմի միծաթիւ երամակ, որ փոխանակելու էր յոգնող
եզներին: Տղան սալերից մէկում կիսարթուն, նորից
դիտըքնի գնաց պարկերի վրայ: Երբ կրկին արթնա-
լցաւ, կարաւանը Կանգ էր առել մի ամպի դաշտա-
վաշտում, և մարդիկ բոլորաձև նստած էին մի կէս
—հորթի չորս կողմը, որ հագին շամփուր անցում
միտրովում էր կրակի վրայ: Նրանք միասին կերան,
—քուն եղան ու յետոյ նորից յառաջ գնացին. և այս-
պէս շարունակուեցաւ ուղևորութիւնը՝ զննողական

չուի նման կանոնաւոր գնացքներով: Ամեն առաւօտ չուն սկսում էին հինգ ժամին, իննին հանգստանում էին, երեկոցեան հինգ ժամին շարունակում էին ճանապարհն և տասնին զարձեալ դադար առնում: Մարդիկը ձիաւոր էին և բշտում էին եղներին երկայն երկայն մտրակներով: Տղայի պաշտօնն էր խորովածի համար կրակ վառել, անասուններին ճարակ տալ, լապտերները մաքրել և խմելու ջուր բերել: Զրջակայքն անց էր կենում նրա առջևից մի անվերջ երազի պէս—լայնատարած անտառներ, փոքրիկ ու թխագոյն ծառերով,—գիւղեր՝ սակաթիւ ու ցիւրկացան տներով: որոնց կարմիր ճակատները կեռիքներով էին պաշտպանուած,—հարթածաւալ աղի պէս սպիտակ տափարակներ, որոնք թերեւս մի ժամանակ աղի ծովի շատակ եղած լինէին, և շուրջանակի դաշտագետին, ամաշուժիւն, լուսիւն: Գուն ուրեք պատահում էին երկու երեք ձիաւոր, որոնց ետևից փոթորկի պէս սլանում էր ազատ ձիերի մի երամակ: Բոլորովին իրար նման օրերն անտանելի և անվերջ էին, ինչպէս որ ծովի վրայ: Սակայն եղանակը գեղեցիկ էր: Դրան հակառակ՝ ուղեկից մարդիկը դառնում էին օր ըստ օրէ լսատապահանջ, կարծես թէ Մարկօն նրանց վարձկան ծառան լինէր: Նրանք սպառնական խոստովեամբ էին վարվում հետը, ամենքն էլ անդթաբար ստիպում էին, որ ծառայէ, ծանր ծանր խուրձեր կրէ, հեռու տեղերից ջուր բերէ,—և չնայելով չոզնութեան՝ նա գիշերներն անզամ քուն չուներ, որովհետև անդադար վրդովում էր սալի ու ժգին ցընցումներից, անիւների ու սունակների խլացուցիչ ճըռճողոցից: Վերջի վերջոյ մի սաստիկ հոգմ էլ բարձ-

ձրացաւ. կարմրագոյն, պարարտ ու նուրբ փոշին, որ ամեն բան պատել էր, եկաւ մտաւ նրա շորերի տակ, լցուեցաւ աչքերի ու շրթունքի մէջ, տեսութիւնն ու շնչառութիւնը ծանրացրեց և դարձաւ անտանելի: Խեղճ տղան յոգնութիւնից ու հսկումից պարտասուած՝ հագուստը բզիք բզիք ու կեղտոտ առաւօտից մինչև երեկոյ թշնամանքի ու կոպտութեան ենթարկուած, օր ըստ օրէ ընկճվում էր և իօպառ արիութիւնը երկորցնէր, եթէ երեմն երբեմն կապատացը նրան մտերմական խօսքեր չսէր: Սալի մի անկիւնում, երեսը պաշտպակի մէջ թաքցրած, նա ստէպ անտես լաց էր լինում: Ամեն առաւօտ վեր էր կենում և առաւել թուլացած, վհատած, և շարունակ տեսնելով մի և նոյն անհամբույր ու անողոք դաշտավայրը, որ ուլկիանի պէս անեղը էր, ասում էր ինքն իրեն.—Ո՛հ, էլ չեմ դիմենալ այս գիշերուան, այս գիշերը չեմ լուսացնիլ: Այս օր կըմեռնիմ ճանապարհին...—Եւ ցաւերն աճում էին, բռնի վարմունքը սաստկանում էր: Մի առաւօտ նա փոքր ինչ ուշացել էր ջուր բերելիս, և ուղեկիցներից մինը ծեծեց նրան կապատացի ներկայութեամբ: Եւ ահա սկսան լաղալիկ տեղ բանեցնել նրան, և մի բան հրամայելիս՝ ապտակել նրան, ասելով.—Ասպիր այս բանը, շրջովիկ:—Տար այս մօրդ, անպիտան:—Նրա սիրտը կեղեքվում էր, նա հիւանդացաւ.—ջերմից տատանուելով սալի մէջ մի ծածկոցի տակ ընկած, երեք օր պառկած կեցաւ, և ոչ ոքի չէր տեսնում, բաց միայն կապատացին, որ գալիս էր տալու նրան մի ունայ ջուր ու շօշափելու բազկերակը: Տղան արդէն կորած էր թւում ինքն իրեն և յուսահատ կան-

չում էր, հարիւր անգամ մօր անուշը հնչեցնելով.— Ա՛խ, մայրիկ իմ, մայրիկ իմ: Օգնիր ինձ: Ե՛կ հասիր ինձ, ես մեռնում եմ: Ո՛հ, խեղճ մայրիկ, էլ երբէք չեմ տեսնիլ քեզ: Միտելի մայրիկ, դու ինձ ճանապարհին մեռած կըգտնես...— Եւ նա կուրծքին էր դնում ձեռքերն և աղօթում: Վերջապէս նա թեթևութիւն գգաց և, կապատացի հոգատարութեան շնորհիւ, առողջացաւ. սակայն առողջութեան հետ միասին նրա ուղեորութեան ամենադառն օրն էլ հասաւ, այն օրը, երբ մենակ պիտի մնար: Արդէն երկու շաբաթից աւելի է, որ նրանք ճանապարհի վրայ էին: Երբ որ հասան այն կէտին, ուր Տուկումանի ճանապարհը զատովում է Սանտիագո դէլ Խոտէրօ տանող ուղիից, կապատացը յայտնեց նրան, թէ արդէն պիտի բաժանուին: Նա մի քանի ցուցմունք արաւ Մարկօին, պաշտօնական էլ աշնակէս՝ կապեց ուսերին, որ ման գալիս խափանարար չլինի, և կարծես թէ դորովելուց երկնչելով, մի շատ կարճ հրաժեշտ առաւ: Տղան հազիւ ժամանակ գտաւ նրա ձեռք համբուրելու: Միւս մարդիկն էլ որոնք այնպէս գաժանաբար տանջել էին նրան, երբ ինքեանք հեռանալով նրա մենակ մեկնիլը տեսան, ասես թէ փոքր ինչ կարեկցութիւն գգացին և բարի երթ մաղթեցին նրան: Նա ձեռով պատասխան տուաւ այդ ողջունին. չետոյ նայեց կարափանի ետեւից, մինչև որ նրանք անհետացան դափարակի կարմիր փոշում, և վերջապէս տրտում սրտով չառաջ գնաց:

Սակայն հէնց սկզբից մի բան նրան մխիթարեց: Այն միահարթ ու անվերջ դաշտերի միջով այնքան երկար ճանապարհորդութիւն անելուց յետոյ՝ նա տե-

սաւ իւր արջը— ձիւնապսակ՝ լեռների մի երկնաբերձ կապուտ շղթայ, որ իւր Ալպերը չիշեցրեց նրան և գրեթէ իւր հայրենիքին մօտենալու նախազգացումն ազդեց սրտին: Դրանք Անդերն էին, ամերիկացին ցամաքի ողնաշարը, այն անազին լեռնաշղթան, որ տարածվում է Հրեդէն երկրիցմինչև հիւսիս այնին բևեռի Սաուցային ովկիանոսը, լայնութեան հարիւր և տասն աստիճաններ անցնելով: Նրա համար սփոփիչ էր և այն հանգամանքն, որ օդը հետզհետէ տաքանում էր. պատճառն այն էր, որ նա շարունակ դէպի հիւսիս գնալով, մօտենում էր արևադարձի ջերմ գօտուն: Հեռաւոր անջրպետների վրայ նա տեսնում էր տնակների փոքրիկ խումբեր որ և է կեդոտո կրպակով, ուր կարողանում էր մի բան ուտել: Հանդիպում էր ձիւնոր՝ փարդկանց և ստեպ տեսնում էր բոլորովին օտար դէմքով, հողազույն, շեղ աչքերով ու դուրս ցցուած աչտերով կանայք ու տղերք, որոնք գետնի վրայ անշարժ ու ծանր նստոտած՝ բիրտ բիրտ պշնում էին նրան և ինքնաշարժ մեքենայի պէս գլուխները կամաց շուր տալով՝ նայում էին ետեւից: Դրանք հնդիկներ էին: Առաջին օրը նա գնաց, ինչքան որ ոչօր ներեց, և ննջեց մի ծառի տակ: Երկրորդ օրն աւելի փոքր ճանապարհ կտրեց և աւելի սակաւ արիւթեամբ: Առջիկներն արդէն պատռուած էին, ոտքերը սկրթուած, որովայնը վատ սնուցից ու ժանտաւուն: Երեկոյեան դէմ երկիւղ տրեց նրա սրտին: Նրան ասել էին Խոպիաչում, թէ այն երկրում օձեր կան. կարծես լսում էր նրանց սողալն և կանգ էր առնում ու սարսուլով շարունակում չառաջ գնալ: Մերթ ընդ մերթ նա սրբտանց խղճում էր ինքն իրեն ու լռիկ լաց էր լինում

բայելիս, որովհետեւ մտածում էր:—Ո՛հ, որքան կը-
վշտանայ մայրիկս, եթէ իմանայ, որ ես այս չափ
վախկոտ եմ:— Եւ այս միտքը նորից քաջութիւն էր
տալին նրան: Յետոյ՝ երկիւղը փարատելու համար,
չիշում էր մօրը, մտաբերում էր նրա խօսքերին, որ
լսել էր Պէնուայից մեկնելիս, և այն սովորական
շարժմանքը, որով ուղղում էր նրա բարձն և բռնում
էր նրան իւր ծոցում, մինչ նա մանուկ էր, և ասում
էր:— Էլի, փոքր ինչ մօտ մնացիր, որդեակ իմ, նա
երկար մնում էր այդպէս՝ գլուխը չնկած մօր գըլ-
խին ու մտախոհ: Եւ նա մտքում ասում էր մօրը.
— Արդեօք տեսնելու եմ քեզ այլ ևս մի օր, սիրելի
մայրիկ: Արդեօք պիտի հասնեմ ճանապարհորդու-
թեանս նպատակին, ո՞վ մայրիկ:— Եւ գնում ու գնում
էր անձանօթ ծառերի միջով՝ շաքարեղեգի ընդար-
ձակ արտերի միջով, անվերջ թուող մարգերի միջով,
շարունակ աչքի առջև ունենալով ահադին կապուտ
լեռներն ու բարձրադիրակ գագաթները: Չորս օր—
հինգ օր—մի շաբաթ անցաւ: Նրա գօրութիւնն արագ
արագ նուազում էր, ոտքերից արիւն էր հոսում:
Վերջապէս մի երեկոյ, արեւ մայր մտնելու միջոցին,
նրան ասացին:— Տօկուման հագնելով համար հինգ
մղոն է մնացել:— Նա ցնծութեան ձայն արձակեց և
փութացրեց քայլերն, ասես թէ մի վայրկեանում չետ
ստանալով կորած ուժը: Բաց այդ մի վաղանցուկ
սխառանք էր: Նա չանկարձուածաթափ եղաւ և մի-
անգամայն սխառանաւձ՝ ընկաւ մի փոսի եզերքին:
Սակայն սիրտը դուռնութիւնից թնդում էր: Երբէք այն-
պէս գեղատեսիլ էր թուել նրան պայծառ աստղերով
փայլուն երկինքը: Արօտի վրայ տարածուած՝ զիտե-

լով այդ երկինքը, նա կամենում էր փոքր ինչ ներ-
հել ու մտածում էր:— Գուցէ մայրն էլ մի և նոյն բո-
ւական նոյն երկինքը դիտում լինէր...— Ո՞վ մայրիկ
իմ, որ տեղ ես դու: Ի՞նչ ես անում այս վայրկեանս:
Արդեօք որդուդ չիշում ես, մտածում ես Մարկօիդ
վրայ, որ այսպէս քեզ մօտեցել է:— Դժբախտաբար
Խեղճ Մարկօ, եթէ միայն տեսնէիր, թէ նոյն
բուական քո մայրն ինչ դուրսեան մէջ էր գտնվում,
գերմարդկային ճիգ կը թափէիր և նորից չառաջ կ'եր-
թայիր՝ գէթ մի քանի ժամով առաջ հասնելու մա-
րիկիդ:— Եւ մտքը շարունակում էր:— Եւ մտախոհ
Մայրը հիւանդ պառկած էր անկողնի մէջ մի
հոշակաւ տան ստորին չարկում, որ Մէքուինէցի
գերդաստանի բնակարանն էր: Մէքուինէցի ընտա-
նիքը սիրել էր նրան և ոչ մի դարման չէր խը-
նայում հիւանդից: Խեղճ կինն արդէն տկար էր, երբ
Մէքուինէց ճարտարապետին յանկարծ ակտք եղաւ
Բուէնօս Այրէսից հեռանալ: Կործակալի լաւ օդն էլ
չօգնեց նրան: Այլ ևս չստանալով իւր նամակների
պատասխանը ոչ մարդուց, ոչ էլ հօրեղբորից, կինը
սկսաւ մի մեծ աղէտի նախազգացութեամբ չարչա-
րուել: Յարատեւ տագնապը, տուն վերադառնալու և
կամ մնալու անստուգութիւնը, մի բովաբեր լուր
ստանալու երկիւղը, որ օր ու գիշեր լլկում էր նրան,
միանգամայն նրա առողջութիւնը քայքայեցին: Վեր-
ջին ժամանակներս նա ստացաւ և մի ուրիշ ծանր
ցաւ՝ աղիքների բորբոքումն: Արդէն տասն և չորս
օր է, որ հիւանդը պառկած էր անկողնում: Նրա
կեանքը փրկելու համար մի վիրահատութիւն էր ան-
հրաժեշտ: Նոյն բուական երբ իւր Մարկօն կանչում

էր մօրը, հիւանդի անկողնի մօտ կանգնած էին տանտէրն ու տանտիկինը, քաղցրութեամբ չորդորելով, որ թող տա՛յ վիրահատութիւն անելու: Բայց նա լաց լինելով մերժում էր: Մի շաբաթ առաջ Տուկումանից մի հմուտ բժիշկ էր եկել: Բայց ՚ի զուր:—Ոչ, սիրելի պարոններ, —ասաց կինը, —աւելորդ է: Ես այդ բանին դիմանալու ոյժ չունիմ այլ ևս: Ես կը մեռնեմ վիրահատի դանակի տակ: Լաւ է թողէք՝ այսպէս մեռնեմ: Բանս վերջացել է: Լաւ է մեռնեմ, քանի որ չգիտեմ ի՞նչ է պատահել ընտանիքիս:— Եւ տան մարդիկն աշխատում էին սփոփել նրան և սիրտ տալով յուսադրել, թէ անպատճառ պատասխան կը ստանայ իւր վերջին՝ ուղղակի Գէնուա դրած նամակի փոխարէն, —բացատրել, թէ պարտական է գոնէ ՚ի սէր դաւակների կտրել տալ իւր վէրքը: Սակայն զաւակների յիշատակութիւնն և՛ս աւելի ստատկացրեց այն տագնապն ու մռայլ վհատութիւնն, որ վաղուց տիրել էր նրա սրտին:—Ո՛վ որդեակներ, որդեակներ, —գոչում էր նա, ձեռք ձեռին կցելով:—գուցէ կենդանի չլինին այլ և՛ս: Լաւ է որ ես էլ մեռնեմ: Զընորհակալ եմ ձեզնից, իմ բարեսիրտ պարոններ, ՚ի սրտէ շնորհակալ եմ: Բայց լաւ կըլինի, որ մեռնեմ: Վիրահատութիւն էլ որ անէք, առողջութիւն չեմ գտնիլ: Հաստատ գիտեմ: Զնորհակալ եմ ձեր մարդասէր հոգատարութեան համար, իմ պատուական պարոններ: Բժշկի գալն աւելորդ է: Ես մեռնել եմ կամենում: Ճակատագիրս է այս տեղ մեռնել, և ես պատրաստ եմ:—Սակայն տանտէրն ու տանտիկինը շարունակում էին սփոփել նրան ու կրկնել, —Ո՛չ, այդպէս մի ասէք, —և ձեռքերից բռնելով խնդրում էին

նրան ու գգուում: Բայց նա աչքերը փակեց և ընկաւ մի մահանման թմրութեան մէջ՝ բոլորովին ուժասպառ... Եւ տանտէրն ու տանտիկինը մի քանի փամանակ լսալոերի աղօթ լուսով կանգնած մնացին և խոր ցաւակցութեամբ դիտում էին այդ հիացման արժանի մօրը, որ իւր ընտանիքը փրկելու համար այն տեղ էր գնացել—մեռնելու, մեռնելու հայրենիքից վեց հազար մղոն տարակաջ, —այնքան վիշտ ու չարխարանք կրելուց յետոյ... Խեղճ, ազնիւ, բարեսիրտ ու թշուառ կին...

Յաջորդ օրուայ արշալուսին Մարկօն իւր պալուսակը շալակած, մէջքը ծուռ ու կաղ ՚ի կաղ, բայց և լի արիւթեամբ մտաւ Տուկուման: Արդէն տեան հասարակապետութեան ամենանոր և ամենաբոլորք բաղաբը: Ասես թէ նորից տեսաւ Կօրդօփան, Ռօզարիօն, Բուէնօս Այրէսը—նրա առջև բացուեցան մի և նոյն շխտակ ու անվերջ փողոցները, մի և նոյն ստոր ու սպիտակ տները, բայց բուսականութիւնն այնպէս թարմ էր ու շքեղ, օգն այնպէս ամբոսական բուրմունքով լի, լոյսն ու երկինքն այնպէս պայծառ ու վճիտ, որ դրանց նմանը նա իւր օրում չէր տեսել, չէր տեսել մինչև անգամ Խալիլալում: Փողոցներով անցնելիս նա դարձեալ զգաց այն տապաղին չուրմունքը, որ պաշարել էր նրան Բուէնօս Այրէս մըտնելիս: Նա դիտում էր ամեն մի տան պատուհաններն ու դուռը, դիտում էր ամեն մի անցնող կնոջ, յուսալով թէ իւր մօրը կը հանդիպէր:—Փափագում էր հարցմունք անել ամենքին, բայց և ոչ մէկին չէր ջանդգնում կանգնեցնել: Դռների առջև կանգնած մարդիկը շուռ էին գալիս նայելու այս խեղճ, պա-

տրուտած ու փոշոտած տղային, որ ըստ երևութին մի հեռու երկրից այն տեղ եկած օտարական պիտի լինէր։ Եւ մինչ նա որոնում էր այդ մարդկանց մէջ մի բարի դէմք, որին կարող լինէր իւր սոսկալի հարցմունքն ուղղել, յանկարծ աչքին ընկաւ մի կրպակի նշանակ, որի վրայ մի իտալական անուն էր գրուած։ Կրպակում նստած էին ակնոցաւոր մարդ ու կին։ Նա ծանրաքայլ մօտեցաւ դրան և ոչ ժր հաւաքելով հարցրեց։

— Զէք կարող արդեօք ասել, ով պարոններ, թէ որտեղ է բնակում Մէքուինէցի ընտանիքը։

— Զարտարապետ Մէքուինէցը, — հարցրեց խանութպանն իւր կողմից։

— Զարտարապետ Մէքուինէցը, — ասաց տղան մեղմ ձայնով։

— Մէքուինէցի ընտանիքը չէ գտնւում Տուկումանում։

Այդ խօսքերի վրայ թշուառ Փարկօն մի այնպիսի չուսակտուր ու ցաւաղին ճիչ արձակեց, որի նշանը կարող է օրհասական հարուած ստացած մարդը միայն արձակել։

Խանութպանն ու կինը վեր թռան, վրայ հասան և մի քանի հարեաններ։

— Ի՞նչ եղաւ քեզ, ի՞նչ ունիս դու, այ տղայ, — հարցրեց նրան կրպակի տէրը, ներս տանելով ու աթոռի վրայ նստեցնելով տղային։

— Յուսահատուելու բան չկայ։ Մէքուինէցն այն տեղ չէ, բայց հեռու էլ չէ։ Տուկումանից միայն մի քանի ժամ։

— Ո՞ր տեղ է, որ տեղ, — գոչեց Փարկօն, — յանկարծակի քնից սթափուող մարդու նման վեր ցատկելով։

— Այս տեղից տասն և հինգ մղոն հեռու, — շարունակեց խանութպանը, — Սալադիլիօի եղերքին, ուր շաքարի գործարան է շինել տալիս, պարոն Մէքուինէցի տունն այն տեղ է... Ամեն մարդ ճանաչում է նրան... Մի քանի ժամում կհասնես։

— Ես մի ամիս առաջ այնտեղ էի, — ասաց մի երիտասարդ, որ Փարկօն ճիշդ լսելուն պէս վրայ էր հասել։

Փարկօն ականալիչ նայեց նրան և երեսի գոչնը նետելով հապճեպ հարցրեց։

— Տեսած ունի՞ք պարոն Մէքուինէցի աղախնուն, իտալացի կնոջը։

— Գէտուացի կնոջը։ Տալա չէ։

Փարկօն սկսաւ ցնցուելով հեկեկալ։

— Երթէ լաց և թէ ճիճար... Յետոյ բռն ու սաստիկ հաստատութեամբ բացականչեց։

— Ո՞րն է ճանապարհը, — շուտ ասացէք — ճանապարհը... իսկոյն կ'երթամ, ցոյց տուէք միայն ճանապարհը։

— Բայց այն տեղ հասնելու համար գոն մի օր կը հարկաւորի, — ասացին նրանք միասին, — դու չոք նա՞ծ ես, եկ փոքր ինչ հանգստացիր, կարող ես վաղն առաւօտ ճանապարհ ընկնել։

— Անհնարին է, անհնարին, — պատասխանեց տղան։

— Ասացէք, որ ուղղութեամբ պիտի գնամ... ոչ մի վաղը կան չեմ սպասիլ, այս րոպէիս կընկնիմ, եթէ անգամ մեռնելու լինիմ ճանապարհին։

Տեսնելով որ նա այնպիսի անհաշտ և պարտաւոր չէր, որ նրան չընդդիմացան։

— Աստուած լինի քեզ առաջնորդ, — ասացին նրանք։

— Զգո՛յշ եղիր անտառի միջով անցնելիս։

— Բարի ճանապարհ, — փոքրիկ իտալացի։

— Մի մարդ քաղաքից դուրս տարաւ նրան, ճանապարհը

ցոյց տուաւ և սպասեց, մինչև որ նա հեռանայ։ Մի քանի րոպէից չետոյ Մարկօն, պաշտօնակը շալակած ու կաղալով անհետացաւ ծառերի մէջ, որոնք խիտ առ խիտ կանգնած էին ճանապարհի երկու կողմից։

Այդ գիշերը սոսկալի էր հիւանդ պառկած ողորմելի կնոջ համար։ Դժնդակ ցաւերից նա անապիսի հեծեծանք էր արձակում, որ լսողները քստմնում էին։ Այդ ցաւերից նրա տենդը սաստկացաւ։ Հիւանդապահ կանայքն իրենց խելքը կոցրել էին։ Տանտիկինն էլ, բոլորովին սրտաթափ, շարունակ գալիս ու գնում էր։ Ամենքը սկսել էին վախենալ, որ եթէ հիւանդը վիրահատութեան կամք էլ չատներ, բժիշկը ժամանակին չէր հասնիլ, որովհետեւ միայն յաջորդ օրը պիտի գար։ Տենդից ազատ ընկնելիս երեւում էր, որ հիւանդի զարհուրելի ցաւերն ոչ թէ մարմնից էին լառաջ գալիս, այլ իւր հեռաւոր բնտանեաց համար քաշած վշտից։ Մարմինը հիւժուած, դէմքն ալլալլուած՝ նա աղէկէզ յուսահատութեամբ փետփրտում էր գլխի մազերն ու հառաչում։— Աստուած իմ, Մեռնել աչս օտար երկրում, մեռնել առանց տեսնելու սիրելիներին։ Ո՛հ, թշուառ գաւակներս, սրտիս հատորներն, այժմ անմայր պիտի մնան։ Իմ Մարկօն, որ դեռ այնպէս փոքր է, այնպէս բարի ու սիրուն։ Դուք չգիտէք, ինչ տղայ էր։ Ախ, տիկին, եթէ գիտենայիք։ Ես հազիւ կարողացայ պոկել նրան վրդիցս բարև մնայի ընկնել։ Կարծես թէ զգում լինէր, որ այլ ևս տեսնելու չէր մայրիկին... իմ խեղճ Մարկօն, ագնիւ որդիս։ Այն ժամանակ սիրտս պատառուելու վրայ էր։ Երանիլ թէ այն ընկնելի մեռնելի, մեռնելի, երբ նա ինձ վերջին անգամ բարև տուաւ։

Խեղճ մանուկս, նա որ այնքան սիրում էր ինձ, որ ինձ այնքան կարօտ էր, այժմ անմայր, անօգնական, թշուառութեան մէջ ընկած, պիտի ստիպուի հաց մուրալ, իմ Մարկօն, Մարկօն պիտի սովից նեղուած հաց մուրալ։ Ո՛հ, բարեգութ Աստուած։ Ո՛հ, 26-րդում մեռնել։ Բժիշկ բերէք, իսկոյն բերէք։ Թող գալ, կտրատէ ինձ, խելքս առնէ, միայն թէ փրկէ իմ կեանքը։ Փափագում եմ առողջանալ, կամենում եմ ապրել, ճանապարհ ընկնել, փախչել, հէնց վաղը, իսկոյն։ Բժիշկ։ Օգնութիւն։— Եւ կանայք բռնում էին նրա ձեռքից, շոյում էին նրան, սփոփում էին, սիրտ տալիս, հաւատ ու յոյս ներշնչում։ Անուհետեւ մի մահանման լքումն սիրեց նրա սրտին. նա՛ ձեռքերը դորշ մազերին տանելով, մի փոքրիկ մանկան պէս փղձկում էր, հեկեկում ու ժամանակ առ ժամանակ միմնջելով չղզող հանում։— Ախ իմ Գէնուան։ Իմ տոնն։ Գեղեցիկ ծովը... Ո՛հ, Մարկօ, որ տեղ ես այժմ, իմ խեղճ Մարկօ, սիրելեան որդիս։

Այս գիշեր էր, և խեղճ Մարկօն, համարեա թէ ուժասպառ, մի քանի ժամ փոսի եգերքին մնալուց չետոյ, լառաջ էր գնում մի լայնածաւալ անտառի միջով, սոսկավիթխար ծառերի, բուսականութեան հրականների, մայր տաճարի սիւների նման հաստաբետ բուսերի միջով, որոնց ահագին ճիւղերը, լուսնի փայլով լուսաւորուած, հիւսվում էին իրար հետ սքանչելի բարձրութեան մէջ։ Այդ մթութեան մէջ նշմարում էր բիւրաւոր և ամեն տեսակ ծառերի բուն շիտակ, խոնարհ, ծուռ, խաչաձև, տարօրինակ ու սպառնալից դիրքերով— իբրեւ թէ մարտնչելու կազմ ու պատրաստ. ոմանք դետնատարած, սակայն ամբողջ

մնացած աշտարակների նման ընկած էին, թիզ առ թիզ նուաճուելով, ծածկուելով ու խեղդուելով թանձրատերեւ բոյաներից, միւսները մեծ մեծ խմբով կանդնած էին իրար մօտ՝ ուղղորդ ու հոծ, ասես թէ ճաշօրերով ամպերին հասնող տիտանեան նիզակների խուրձ լինէին, — մեծաշաղթ ձևերի մի հոյակապ վեմնութիւն, մի հրաշալի անկարգութիւն, մի սոսկալի վեհութիւն, որի նմանը նա իւր օրում չէր տեսած բուսական աշխարհի մէջ։ Մերթ ընդ մերթ մի զարհուրելի սարսափ էր գալիս նրա վրայ։ Բայց և իսկոյն նրա հոգին մայրիկի մօտ էր սաւառնում, Եւ նա ուժահատ էր, ոտքերն արիւնացալտ, մենակ աչս արհաւիրական անտառի մէջ, ուր միայն տեղ տեղ երևում էին արնակներ ու ճանապարհին պառկած գոմէշներ, Երգէն ուժից ընկել էր նա, բայց յոգնութիւն չէր գգում, մենակ էր, բայց սրտում երկիւղ չուներ։ Անտառի մեծութիւնը մեծացրել էր նրա հոգին, մօր մերձաւորութիւնը մի աչք մարդու գորութիւն ու կորով էր ազդել նրա սրտին, ովկիանոսի չիշատակը, համբերած ու յաղթած վտանգների, արգէն կրած տանջանքների չիշատակն աւելի ջերմ էր հոսեցնում իւր գորեղ ու ազնիւ գէնուական արիւնն և համարձակ հպարտութեամբ վերցնել տալիս իւր ճակատը։ Մի ուրիշ բան էլ պատահեցաւ։ Մօր պատկերը, որ երկու տարուայ բացակայութեան միջոցին փոքր ինչ նսեմացել էր որդու մտքում, այժմ յանկարծ պայծառացաւ, այժմ նա տեսնում էր այդ պատկերն անուօք ու պարզ ինչպէս որ վաղուց ի վեր չէր տեսած, տեսնում էր նրան իւր կողքին՝ կենդանի ու խօսուն, տեսնում էր աչքերի ու շրթունքի ամենամեծ շարժումները,

շունուածքը, քալածքը, մտքերի ամեն երանգները, և այս անմոռանալի չիշատակներից շառաջ մղուած՝ նա իւր քայները փութացրեց և նրա սրտում մի նոր զգացմունք զարթեցաւ, մի նոր տեսանք, որ քաղցր ու հեշտագին արտասուք բամեց իւր աչքերից։ Եւ մթութեան մէջ շառաջ գնալիս՝ նա ասում էր այն բառերն, որ կըցանկար շուտով մօր ականջին շշնջել. — Ահա եկայ, մայրիկ իմ, տես — քեզ մօտ եմ... Էլ երբէք չեմ թողնիլ քեզ... մենք միասին տուն կ'երթանք և նաւի վրայ ես միշտ քեզ մօտ կըկենամ, միշտ քեզ կպած կըմնամ, և ոչ ոք չի կարողանալ չափշտակել ինձ քեզանից, ոչ ոք, երբէք, երբէք, քանի որ դու կենդանի լինիս... — Եւ նա չնկատեց, որ արծաթափայլ լուսնի լոյսը հսկայական ծառերի գաղաթին արգէն մեղմիւ տեղի էր տալի արշալուսին։ Նոյն օրուայ ութ ժամին Տուկումանից եկած երիտասարդ արգէնտացի բժիշկը արդէն իւր օգնականի հետ գտնաւում էր հիւանդի մօտ՝ վերջին անգամ փորձելու համար, որ նա թույլ տայ կտրել վերքը, այդ մասին թախանձելով խնդրեցին նրան և տանտէրն ու տանտիկինը։ Սակայն ամեն բան զուր եղաւ։ Հիւանդ կինը, իւր ուժերի սպառուիլը զգալով, այլ ևս ոչ մի հաւատ չէր ընծացում բժշկական գործողութեան. նա վստահ էր, որ վիրահատութեան տաժանելի ցաւերից յետոյ կամ իսկոյն և կամ փոքր ինչ անցած կըմեռնի, և լաւ էր համարում իւր բնական ցաւով մեռնել։ Զուր էր կրկնում բժիշկը, թէ — Դուք անշուշտ կըփրկուիք, եթէ միայն փոքր ինչ արիւթիւն ունենաք։ Բայց անշուշտ էլ կը մեռնիք, եթէ թույլ չտաք վերքը կտրել։ — Այս խօսքերն աւե-

լորդ էին։—Ոչ,—պատասխանեց հիւանդ կինը նուազ ծաշնով,—մեռնելու արիութիւն դեռ ունիմ, բայց զուր տեղը չարչարուելու արիութիւն այլ ևս չունիմ։ Զնորհակալ եմ, պարոն, բժիշկ։ Աականադիրս աչսպէս է։ Թողէք որ հանգիստ մեռնեմ։—Բժիշկն այլ ևս բան չասաց, ոչ ոք էլ անուհետեւ բան չսօսեց։ Այդ միջոցին հիւանդը տանտիկնոջ կողմը դարձաւ ու իւր վերջին խնդիրը յաջտնեց հոգեվարի տկար ծաշնով։—Սիրելի, բարի տիկին,—ասաց նա հեծեծելով և ամենամեծ գոժուարութեամբ,—հոգ տարէք, աղաչում եմ, որ փոքրիկ գունարս և աննշան իրեղէններս ընտանիքիս առաքուին... պարոն հիւպատոսի միջնորդութեամբ։ Յոյս ունիմ, որ բոլորն էլ կենդանի են։ Սիրտս այդպէս է վկայում։ Զնորհ արէք զրելու նրանց... որ ես միշտ չիշել եմ նրանց, որ շարունակ աշխատել եմ նրանց համար... զաւակներիս համար... և թէ միակ ցաւս այս է եղել, որ ես նրանց տեսնելու չեմ... Գրեցէք սակայն, որ մեռնելիս քաջ եմ եղել... բրիտոնէի հնազանդութեամբ... օրհնելով նրանց, և որ ես մարդուս... և աւագ որդուս եմ յանձնում... իմ փոքրիկ, իմ խեղճուկ Մարկօին... որին մինչև վերջին շունչս դգուել եմ սրտիս մէջ։—Եւ յանկարծ բարձրանալով՝ նա ձեռք ձեռքին կցեց ու գոչեց։—Իմ Մարկօն, իմ Մարկօն, որդեակս, կեանքս...—հաց արտասուելից աչքերը շուրջ չաճելիս, նկատեց, որ այլ ևս տանտիկինն իւր մօտ չէր։ Նրան թաքուն գուրս էին կանչել։ Հիւանդն սկսաւ որոնել տանտէրին։ Սա էր կորել էր։ Ել ոչ ոք չկար նրա կողքին, բաց միայն բժիշկի օղնականն և երկու հիւանդապահ կանաչքրկից սենեակից լսվում էր արագ տրոփիւն, մեղմ շշուկ

ու զսպուած աղաղակ։ Հիւանդն իւր թույլ աչքերը շեշտակի դրան վրայ սեւեռեց ու սպասում էր։ Մի քանի րոպէից նա նշմարեց ներս մտնող բժիշկին, որ կարծես թէ աչալսում էր։—Յետոյ տիկնոջն ու տանտէրին, որոնց երեսը նմանապէս փոխուած էր։ Երեքն էլ մտիկ տուին հիւանդին մի տարօրինակ նայուածքով ու կամացով մի քանի բառ փոխանակեցին։ Երբ ժիշկն ասաց տանտիկնոջը։—Իսկոյն կըլաւանայ։—Հիւանդը լսեց այդ խօսքերը, բայց ոչինչ չհասկացաւ։—Յօգէ՛ֆա,—ասաց տիկինը դողդոջ ծաշնով։—Մի լաւ լուր եմ բերել ձեզ։ Պատրաստուեցէք մի աւետիք լսելու։ Հիւանդն ուշադրութեամբ նայեց տիկնոջը։—Մի աւետիք,—շարունակեց տիկինն, ևս աւելի յուզուած սրտով, որ մեծ ուրախութիւն կը պատճառէ ձեզ։—Իրաւաբան մի լի էր քաղաքում։—Հիւանդն աչքերը խոշոր խոշոր բաց արւած։—Պատրաստուեցէք,—շարունակեց տիկինը,—տեսնելու մի անձն... որին շատ սիրում էք։—Կինը բուռն շարժմամբ գլուխը բարձրացրեց ու չուսափալ աչքերով սկսաւ նայել մերթ տիկնոջը, մերթ դրան։—Մի անձն,—ասաց տիկինը գունատնելով,—այս րոպէիս... մի անսպասելի անձն եկաւ։—Ո՛վ,—գոչեց կինը, մի խեղդուկ, անբնական ծաշն հանելով և իսպառ զաթեկուած։—Մի վաշրկեան յետոյ նա թափանցիկ ճիւղարձակեց, անկողնի մէջ ուղիղ նստաւ և անտիւն լալսարհից մի երեւոյթ տեսնողի պէս ականապիշ ու անշարժ մնաց։ Մարկօն, պատառոտուն դու և փոշոտ, կանգ-

Նաճ էր շեմքի վրայ, մի թևով բժշկին կռթնած։
Գինն երիցս գոռաց։— Աստուած, Աստուած, Աս-
տուած իմ։ Ի՞նչ եղբայրս, ի՞նչ եղբայրս։
Մարկոն չառաջ նետուեցաւ։ մալրը անիշար բա-
զուկները մեկնելով, վագրի ուժով սեղմեց նրան լուր
կուրծքին։ Գետոյ սկսաւ ծիծաղել ու լաց լինել անար-
տօսը հեկեկանքով և վերջապէս ընկաւ բարձի վրայ
շնչասպառ։

Բայց և իսկոյն ուշքի եկաւ ու բերկրութիւնից
շափշմակուած, անթիւ անգամ որդու զլուխը համ-
բուրելով, աղաղակեց։— Ի՞նչ պէս եկար դու այստեղ։
Ինչո՞ւ եկար։ Դո՞ւ ես այս։ Որչափ մեծացել ես։ Ո՞վ
բերաւ քեզ։ Սենակ ես։ Նիւպեղ չեմ։ Այս դո՞ւ ես,
Մարկո։ Երբեք է այս թէ իսկութիւն։ Աստուած իմ։
Խօսիր։— Յետոյ յանկարծ եղբայրս փոխելով։— Ոչ,
լուր։— Եւ արագ բժշկին դառնալով։— Ըստ արէք,
բժիշկ, անմիջապէս։ Ես ուղղում եմ առողջանալ։ Պատ-
րաստ եմ։ Ոչ մի վարկեան չկորցնէք։ Հեռացրէք
Մարկոին, որ ոչ մի բան չսէ։ Մարկո, հոգեակ իմ,
բան չկայ, միտքիտ եղիր։ Յետոյ կը պատմես ինձ։ Սա-
կայն՝ այլ ևս մի համբույր։ Գնա։ Ահա պատրաստ եմ,
պարոն բժիշկ։

Մարկոին դուրս տարան։ Տան տէրը, տանտի-
կինն ու կանայքը հեռացան։ մնացին բժիշկն ու օգ-
նականն, և դռները պոցեցին։

Պարոն Մէքուինէցը կամենում էր մի հեռաւոր
սենեակ տանել Մարկոին, ամական անհնարին եղաւ
այդ անել, տղան կարծես թէ գամուած լինէր յատակին։
— Այս ինչ է, հարցրեց նա։— Ի՞նչ ունի մալրս։
Ի՞նչ ես անում այդ ամարդիկը։

Եւ պարոն Մէքուինէցը, հանդարտ փորձելով
հեռացնել նրան, նկատեց։— Պէ լսիր։ Ես կ'ասեմ քեզ
բանի էութիւնը։ Մալրդ հիւանդ է. անհրաժեշտ է
մի վիրահատութիւն անել նրան։ Ես ամեն բան կը-
բացատրեմ։ Եկ ինձ հետ։

— Ո՛չ,— պատասխանեց տղան, կանգնած մնա-
լով։— Ես այստեղ կը մնամ։ Ինչ որ ասելու էք, այս
տեղ ասացէք։

Ճարտարապետը բառ բառի վրայ կուտակելով,
աշխատում էր գտնէ փոքր ինչ հեռացնել նրան.
տղան սկսաւ սարսուռ ու դողալ։

Յանկարծ հնչեց իբրեւ թէ առ ՚ի մահ վիրա-
ւորուածի մի սուր ճիչ, որ ամբողջ տան մէջ արձա-
գանդ տուաւ։

Տղան պատասխանեց մի ուրիշ յուսակտուր
աղաղակով։— Մալրս մեռաւ։

Բժիշկն երեցաւ դրան մէջ և ասաց։— Մալրդ
փրկուած է։

Տղան մի վայրկեան դիտեց նրան և յան-
կարծ չոքեց նրա առջև։— Զնորհակալ եմ, պարոն
բժիշկ։

Սակայն բժիշկը մէկ անգամից վերցրեց նրան և
ասաց։— Վեր կաց... դիւցազն մանուկ, դու մալրիկդ
փրկեցիր։



[illegible]

Երևանի քաղաքապետարանի քաղաքացիական ծառայության ղեկավար Գրիգոր Բաբայանը:

խորվառութի յայլի դուռը մայր դամբաստանդանն
մայրն յմեծատնէ չմի դպրոց խնոր դէ և տառապէս

Հարգելի իմ խոստովանողներս, մարտի
-սպիտակ Հունի 17-ին լինելով ձեր հետ Մարտիկում:

ՀԱՅԿԱՆ ԱՊՐԱՍԻԱՆ

Հին Երևանի քաղաքի մասին հիշատակումները հիմնականում կապված են Մարտիրոսի անունով հայտնի խաչով, որի վրա արված է խաչաձև խորանարդի պատկերը։

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՇԽԱՏԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

մայր և մայր՝ բնակիչների մոտ
մեղադրանքներ չկան, որոնք մեղադրանքներ չեն
մեղադրանքներ չեն, որոնք մեղադրանքներ չեն

Ամաղմ, Բմբղղմ, Բմնաբմա լին պլելել պ' Բնալամ

Իմ քննության արդյունքն է՝ զեղծություններ և զեղծություններ։

2454

Հայաստանի Ազգային գրադարան



NL0445824

